

ԻՄ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՅՆՇՏԵՅՆԻ ՄԱՍԻՆ

Լեոպոլդ ԻՆՖԵԼԴ

Որսանողական կյանքի հինգերորդ տարում ես հայտնվեցի Բեռլինում: Ուզում էի դասընթացն ավարտել այնտեղ, Եվրոպայի ամենալավ համալսարաններից մեկում: Երկար ժամանակ տարբեր ճանապարհներով աշխատում էի ընկնել այն համալսարանը, որտեղ կարգում էին Պլանկը, Լաուէն և Էյնշտեյնը: Սակայն իմ բոլոր փորձերը փշրվում էին դիպչելով լեհերի նկատմամբ տածվող թշնամության պատիժ: Ինչ-որ մեկը խորհուրդ տվեց դիմել Էյնշտեյնին, այդ ժամանակ արդեն գիտնականների մեջ ամենից ավելի հայտնի և ամենաշատ հարձակումների ենթարկվող մարդուն: Ես գիտակցում էի, որ իմ կուլմից հանդգնություն կլինի՝ անձնական գործերով անհանգստացնել Էյնշտեյնին: Բայց Բեռլինի համալսարանն ընկնելը այն ժամանակ ինձ կյանքի և մահու հարց էր թվում:

Ես վանգահարեցի նրա բնակարանը:

— Պրոֆեսոր Էյնշտեյնը տա՛նն է:

— Այո՛, տանն է, պատասխանեց կանացի մի ծայն:

— Ես ուսանող-ֆիզիկոս եմ Լեհաստանից: Ուզում եմ պրոֆեսոր Էյնշտեյնի հետ տեսնվել: Կարո՞ղ է ընդունել նա ինձ:

— Իհարկե: Ավելի լավ է՝ հիմա գաք:

Երկշտ ու խորապես հուզված, տոնական տրամադրությամբ, որ շուտով երես առ երես հանդիպելու եմ ժամանակակից ամենամեծ ֆիզիկոսի հետ, ես վանգահարեցի Էյնշտեյնի բնակարանի դուռը (նա ապրում էր Խաբերլանշտրասե 5-ում): Տիկին Էյնշտեյնը ինձ հրավիրեց ծանր կահույքով կահավորված մի փոքրիկ սենյակ: Ես հայտնեցի նրան իմ գալու նպատակը: Նա ներողություն է խնդրում, որ ես պետք է սպասեմ. ամուսինը խոսում է Չինաստանի լուսավորության մինիստրի հետ: Սպասում եմ: Երեսու վառվում է անհամբերությունից և հուզվումքից: Վերջապես Էյնշտեյնը

Լեոպոլդ Ինֆելդը երկար տարիներ եղել է Էյնշտեյնի աշխատակիցը:

Այստեղ մենք տպագրում ենք առանձին հատվածներ նրա «Հիշողություններից», որը ամբողջությամբ լույս է տեսել «Էյնշտեյնը և ժամանակակից ֆիզիկան» ժողովածուում:

բացեց դուռը, հրաժեշտ տվեց չինացուն և հրավիրեց ինձ: Նա հագել էր սև բաճկոն և զուգվոր անդրավարտիք, որի վրա պարկատում էր հիմնական կոճակը: Նույն այն դեմքը, որ ես արդեն բանի անգամ տեսել էի թերթերում և ամսագրե-

րում: Բայց ոչ մի լուսանկար չէր կարող հաղորդել նրա աչքերի փայլը:

Ես բոլորովին մոռացա ջանասիրաբար պատրաստած իմ ամբողջ ասելիքը: Էյնշտեյնը բարեկամաբար ժպտաց և հյուրասիրեց ինձ ծխախոտով: Դա առաջին բարեկամական ժպիտն էր, որ ես առիթ ունեցա տեսնել Բեռլին ժամանելու պահից ի վեր: Կակալելով ես պատմեցի նրան իմ դժվարությունների մասին: Էյնշտեյնը ուշադրությամբ լսում էր:

— Ես հաճույքով հանձնարարական նամակ կգրեի ձեզ համար պրուսական Լուսավորության մինիստրությանը, բայց դա ոչ մի արդյունքի չի հասցնի:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ես արդեն շատ հանձնարարականներ եմ տվել:— Հետո կամացուկ ու քմիծաղով ավելացրեց.— Նրանք հակահրեականներ են:

Նա մի րոպե մտածմունքի մեջ ընկավ, ետ ու առաջ անելով սենյակում:

— Այն, որ դուք ֆիզիկոս եք, գործը հեշտացնում է: Ես մի երկու խոսք կգրեմ պրոֆեսոր Պլանկին: Նրա հանձնարարականը ավելի մեծ նշանակություն ունի, քան իմը: Այդ կլինի ամենից լավը:

Նա սկսեց նամակի համար թուղթ որոնել, որն ընկած էր նրա առջև, գրասեղանին: Ես չափից ավելի էի երկշտել, որպեսզի ցույց տայի նրան թղթի տեղը: Վերջապես, նա գտավ թուղթը և արագ մի քանի քառ գրեց: Նա այդ արավ առանց իմանալու թե՞ ես գտնե որևէ պատկերացում ունեմ ֆիզիկայի սասին, թե ոչ: Նրան հայտնի էր մի բան, որ ես պրոֆեսոր Նատանսոնի աշակերտն եմ, որին նա գիտեր և գնահատում էր: Ես արդեն բավականաչափ ապատ էի զգում ինձ, որպեսզի նրան մի քանի հարց տայի, կապված հարաբերականության տեսության և այն ժամանակ ինձ հուզող պրոբլեմների հետ:

Ես հրաժեշտ տվեցի: Այսպիսին էր իմ առաջին և մոտակա 16 տարում միակ անձնական հանդիպումը Էյնշտեյնի հետ: Այդ առաջին հանդիպումը թույլ տվեց ինձ համոզվել այն պարզ ճշմարտության մեջ, որ իսկական մեծությունը և

խակական ակնկալութիւնը միշտ միասին են հանդես գալիս:

Էյնշտեյնի դերը գիտության մեջ ըմբռնելու համար որպէս բանալի ծառայում է նրա միայնականությունը: Այս իմաստով նա տարբերվում է բոլոր այն գիտնականներից, որոնց եւ իմացել եմ: Այդ տեսակետից նրան ամենից ավելի մոտիկ կանգնած է Դիրակը, թեւ տարբերությունը նրանց միջև մեծ է: Երբ Էյնշտեյնը 1905 թվականին ձևակերպեց իր հարաբերականության մասնավոր տեսությունը, գիտական աշխարհում ոչ ոք նրա առումը չգիտեր: Նա երբեք ֆիզիկական չի ուսումնասիրել ոչ մի հայտնի համալսարանում, կապված չի եղել և ոչ մի հայտնի ֆիզիկական շրջալսի հետ, այն ժամանակ նա ծառայում էր արտոնագրային գերատեսչությունում:

Մի անգամ Էյնշտեյնն ինձ ասաց.

— Մինչև երեսուն տարեկան հասակս ես չեմ տեսել իսկական ֆիզիկոս-տեսաբանի:

Այն ժամանակ ես շատ էի ուղիւմ նրան ասել, թե չի՝ պատահել արդյոք, որ նա նախ հայելու մեջ:

Մինչև իր կյանքի վերջին րոպեները Էյնշտեյնը հավատարիմ մնաց աշխատելու իր մեթոդներին, ինքն էր իր առաջ պրոբլեմները դնում և գնում էր սեփական ճանապարհներով: Հետագայում միայնակ աշխատելու այդ մեթոդն արդեն չտվեց այնպիսի աչքի ընկնող արդյունքներ, ինչպիսիք էին հարաբերականության մասնավոր և ընդհանուր տեսությունները:

Ամեն ինչ իր ձեռքով անելու սովորությունը Էյնշտեյնի մեջ շատ հեռու էր գնացել: Մի անգամ, երբ ինձ պետք էր կատարել մի հաշվարկ, որը բերված է շատ գրքերում, ես ասացի.

— Տեսներ, թե ինչպէս է այդ այնտեղ արված: Մենք բավական ժամանակ կխնայենք:

Բայց Էյնշտեյնը շարունակում էր հաշվել:

— Այսպէս ավելի արագ կլինի, — պատասխանեց նա: — Ես արդեն մոռացել եմ, թե ինչպէս են նայում գրքերի մեջ:

Նախքան մենք կրթատարակները մեր աշխատությունը, եւ Էյնշտեյնին առաջարկեցի հավաքել մեր աշխատանքին վերաբերող գրականությունը, որպեսզի տանք այդ հարցի վրա աշխատած գիտնականների անունները: Բարձր ծիծաղելով նա ասաց.

— Ախ, հա՛: Անպայման: Այդ տեսակետից ես արդեն մեծ մեղք եմ գործել:

Դժվար է անդրդվելի մնալ փառքի հանդեպ, դիմադրել նրա ակոհեցությանը: Սակայն փառքն ամենևին չփոխեց Էյնշտեյնին: Դա նրա մեկուսացման և միայնակության հետևանքն էր: Փառքը խանգարում էր նրան, երբ կոնֆլիկտի մեջ էր մտնում նրա ապրելակերպի հետ, բայց նա մոռանում էր փառքի մասին, երբ արտաքին հանգամանքները թույլ էին տալիս այդ:

Նույնիսկ Պրինստոնում, համալսարանական այդ փոքրիկ քաղաքում, բոլորն Էյնշտեյնին նայում էին անհագ, հիացած աչքերով: Զբոսնելիս մենք խուսափում էինք մի քանի առավել աշխույժ փողոցներից և ընտրում էինք դաշտեր ու ամառի փոքրիկ փողոցներ: Մի անգամ, օրինակ, ինչ-որ ավտոմեքենայից մեզ խնդրեցին կանգ առնել: Մեքենայից դուրս եկավ մի երիտասարդ կին՝ լուսանկարչական ապարատով և հուլմունքից կարմրած խնդրեց.

— Պարոն պրոֆեսոր, թույլ տվե՛ք լուսանկարել ձեզ:

— Խնդրեմ:

Նա մի քանի վայրկյան կանգնեց հանգիստ, իսկ հետո շարունակեց իր դատողությունները:

Ես համոզված եմ, որ մի քանի րոպեից հետո նա մոռացավ այդ միջադեպի մասին:

Մի անգամ Պրինստոնում մենք գնացինք Լիւտ՝ «Էմիլ Զոլայի կյանքը»: Տոմսեր գնելուց հետո, մենք մտանք լեփ-լեցուն ճեմասրահը և այնտեղ միայն իմացանք, որ դեռ 15 րոպե պետք է սպասենք: Էյնշտեյնն առաջարկեց մի քիչ ման գալ: Դուրս գալու ժամանակ հսկիչին ասացի.

— Մենք կվերադառնանք մի քանի րոպեից հետո:

Սակայն Էյնշտեյնը անհամազուտացավ:

— Մեզ մոտ արդեն տոմսեր չկան, դուք մեզ կճանաչե՛ք:

Հսկիչը, գտնելով, որ դա հաջող կատակ է, պատասխանեց.

— Այո, պրոֆեսոր, ես ձեզ երևի կճանաչեմ: Երբ ես դիտում էի նկարը, մտածում էի, որ եթե ոչ ես, ապա իմ երեխաները, հավանաբար, երբևիցե կտեսնեն «Ալբերտ Էյնշտեյնի կյանքը» ֆիլմը և այն կլինի պատմականորեն նույնքան ճշմարիտ, որքան և սա:

Եթե հանգամանքները թույլ էին տալիս, Էյնշտեյնը ամենևին չէր գիտակցում իր փառքը: Նա, թերևս, միակ օրինակն էր այնպիսի մարդու, որի վրա ամենամեծ փառքը ոչ մի ակոհեցություն չգործեց: